



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. ՎԱՆԴԵԿ

ՄԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՅԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
„ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱՆԳԱՂ“

ԽՕՍԿ. ՀԱՅ ԳՐԱԿ.-ԳԵՂ.
ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ

8 91.98.09
Վ-22

ԽՕՍԿՎԱ 1923

891.99.09
Q-22

19 NOV 2011

Վ. Պ. Ա. Ն Դ Ե Կ

ՄԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՀԱՐ

(Քննական ակնարկ)

ՀՐԱՏԱՐԿԱԾՈՒԹԻՒՆ
„ՄՈՒՐԱ ԵՒ ՄԱՍԳԱՆ”


ՄՕՍԿՎԱ 1923

13248

07 AUG 2013

65040

49620-65



(693)
43

իմ կուռում պիտ ընկնի Վաշինգտօն.
Արթուրով թէ հոսէ Կալկութան,
Եւ Փարիզ և Բէրլին և Լօնդօն
Թող ապրեն իմ վերջին Գողգոթան:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գուրգէն Հայկոնու «Գողգոթա» պօէմը
անկասկած հայ գրականութեան եզակի ստեղ-
ծագործութիւնների շարքին է պատկանում:
Պատկերների գեղարւեստականութեան, հո-
գերանական խոր ապրումների և վերջապէս
լեզւի երաժշտականութեան տեսակէտից դա
Աւ. Խսահակեանի «Արուլ Ալա Մահարուն»
միանգամայն հաւասար մեծութիւն է. սա-
կայն ներքնապէս այդ նիհիլիստական—յոռե-
տես պօէմին հակադիր «Գողգոթան» լիրի-
քօրէն բարդ՝ կենսուրախ և առողջ աշխար-
հալմբոնման, ակտիւ փիլիսօփայութեան մի
աննման հիւաւածք է՝ լի մարտական տենչե-
րով: Պատկերները ու ապրումները այնքան
յստակ և ուժեղ շարիխներով են արւած,
որ ակամա ապրում ես նըանց ազդեցու-
թեան տակ. միաքն ու զգացմունքները հո-

սում և ծաւալւում են, կոփելով ընթերցողի հոգում հուժկու տեսչ դէպի գագաթները «կապուտան»։ Պօէմը ոչ թէ կարդացւում, այլ կլանւում է. իսկ սիրտդ ուժգնօրէն բարխում է, ունիսօն տաղանդաւոր բանաստեղծի խիզախ ըմբռնումներին ու գեղարւեստական հրաշալի նկարագրութիւններին։ Գուրգէն Հայկունու «Գողգոթա» պօէմը միւնոյն ժամանակ բուրժուական և այլ գրական հոսանքների դէմ ուղղւած որոշակի և կտրուկ, նրանց կասեցնելու և յաղթանակող պրօլէտարական գրականութեան ճանապարհը հարթելու մի յանդուգն ձևակերպումն է։ Այժմ անցնենք «Գողգոթա» պօէմի վերլուծութեանը ու տեսնենք թէ նախարական արժէքներ է պարփակում իր մէջ։

Գուրգէն Հայկունու «Գողգոթա» պօէմի մէջ, ինչպէս արել մի ջինջ կաթել ջրի մէջ արտացոլած է յեղափոխական պրօլէտարիատի պայքարն ու դեգերումները, պրօլետարիատի, որ մերթ յախուն շարքերով,

մերթ ստորերկրեա տարերային թափով գրոհ է տալիս՝ խորսակելու ընդմիշտ իր հակառիք ուժերի վերջին հիմունքները և համաձայն պրօլէտարիատի պատմական միսիային, կերտելու գալիք Մեծ Ճշմարտութիւնը իր հասարակական նոր արժէքներով։ —

Ու կելնեմ շարէ-շար, բիւր հազար.
Ու կերթամ ընկճելու տարերքին...
Ես կուգամ ծաղկունքով լալազար,
Որ սիրեմ ու փարեմ ամենքին։

Բանաստեղծական ստեղծագործական ֆանտազիան միացած քաղաքական ուժեղ գործչի թափանցիկ զիտողութիւնների հետ՝ ծուլել է վերին աստիճանի գողտըիկ կերտւածք գալիք Պատմական Ճշմարտութեան մասին, որի առաջին Մեծ Ալիքները վեց տարի առաջ ծաւալեցին արևելեան Եւրոպայի լայն տափաստաններում։ Որքա՞ն ըէալ, որքա՞ն կօնկրէտ զգում և ապրում են այդ համաշխարհային պրօցէսսը իր դինամի-

կայով, իր հսկայական ընթացքով: Ըսթեր-
տողը ինչ դասակարգի պատկանելիս էլ լինի,
նա չի կարող շտարւել այդ կօսմիկ յորձան-
քով, չի կարող խորապէս չապրել նրա ան-
յողողող ընթացքը: Անա ինչումն է կայա-
նում «Գողգոթա» պօէմի ամբողջ հասարա-
կական արժեքը, նրա կատարելիք դերը Հա-
յաստանի կազմակերպող պրօլէտարիատի և
երիտասարդութեան մէջ:

Գուրգէն Հայկունու «Գողգոթա» պօէմը
արտադրող դասակարգի աշխարհայեացքի ու
տրամադրութիւնների հարազատ արտայայ-
տութիւնն է՝ հիւտած լիրիքօրէն հարուստ
ձեերով: Կերտածքի հիմնական միտքը յե-
զափոխական ինտերնացիօնալի կապիտա-
լիզմի դէմ մղած կախն է և պրօլէտարիա-
տի անպայման յաղթանակը: Սակայն բա-
նաստեղծը լաւ գիտէ, որ հասարակական
պրօլէմի լուծումը այնքան էլ հեշտ չէ:
կապիտալը ճգնում է կասեցնել պատմու-
թեան ընթացքը և այդպիսով ընդմիշտ խեղ-
դել պրօլէտարական շարժումը: Բայց կա-

ցութեան անողոք դիալէկտիկան այլ է պա-
հանջում. կապիտալի անկումը անխուսա-
փելի է. հեռու չէ պրօլէտարիատի յաղթա-
նակը.—

Իմ կուռում պիտ ընկնի Վաշինգտոն.
Արիւնով թէ հոսէ կալկութան
եւ Փարիզ և Բէրլին և Լոնդօն
Թող ապրեն իմ վերջին Գողգոթան:

Հետևողական իր մարքսիստական իդէօ-
լօգիային՝ հիւտածքը ամբողջապէս շարժում,
երթ և պայքար է իր սիրուն ելեէջներով:
Անա որտեղից է բղխում նրա մարտական
և խրոխտ թափը. այդ իր իդէալի յաղթա-
նակի անկասկած համոզմունքն է.—

Ու կենեմ անշուշտ և խաչը ուսիս.
Այդ հուատ չէ լոկ, այլ իսոր
համոզմունք. *)
Թող մշուշ իջնէ հարաւ ու հիւսիս —

*) Հողգծուները իմն սն:

Գիտեմ ես գարնան կենարար
բուրմունք:

Մարտընչող պրօլէտարիատի խոչընդուռ-
ներով լի կոխուը որքան ճիշտ ու գեղեցիկ
ձևով է բնորոշում.—

Իմ կամքն ու հոգին՝ պողպատից ամուր,
Ծաղր է ինձ համար բաժակն
փողձութեան.

Ինչքան էլ անցնի ձամբէն ծուռ
ու մուռ՝
Ես պիտի ելնեմ գարուն գողգոթան:

Ստեղծագործական կենդանի և ցայ-
տուն հիւսւածքով Գուրգէն Հայկունին իր
«Գողգոթա» պօէմի մէջ արտայայտել է սկ-
րէակցիայի շրջանը իր մութ ուժերով, կո-
պիտ և վայրագ կամայականութեամբ, որ
գաղաղած ճգնում էր արմատախիլ անել ամեն
հասարակական ազատ խօսք և շարժում, ա-
մենաանհիմն կասկածն անգամ բաւական էր

հրի և արեան մէջ շաղախել ամեն ինչ և
բոլորը. սակայն չնայած այդ գաժան պայ-
մաններին պրօլէտարիատի գիտակից մասը,
որի թւին անշուշտ պատկանում է հէնց
ինքը պօէտը, մոռացած անհատական բա-
րորութիւնն ու հանգիստը կատարում էին
կուսակցական-յեղափոխական աշխատանք,
տոգորւած իրենց վեհ գաղափարնեով:
Ահա մի գողարիկ կտոր. —

Մութ էր. գաժան... կար մի
կածան-արահետ.

Ու մենք եարոտ, ու մեր հոգին
ու մըմուռ.

Խաւարներում, միշտ անբաժան,
իրար հետ
Գնում էինք, գնում էինք...
ծուռ ու մուռ:

Կամ հետեւալը. —

Որ գա ցուրտ ձմեռ, գա սառնամանիք,
Ու շուրջս վայէ մահաշունչ քամին—
Ես պիտի լինդամ հերիք է, հերիք,
Գարունը շողաց երկունքի ժամին:

Յեղափոխական ինտերնացիօնալլ իր կապիտալիզմի դէմ մղած պայքարի ընթացքում բաղխուում է նոյնպէս կապիտալիզմին կից և կամ նրանով պայմանաւորւած որոշ «կուլտուրական» ըմբռնումների ու շարժումների հետ, որոնք մտաւոր խոչընդուռներ են հանգիստանում մարդկութեան ազատագրման գործում։ Այդ մտաւոր երկոյթներից մէկը՝ քրիստոնէութիւնը — չարին չընդդիմազրելու, «համեստութեան», «մօտիկին սիրելու» — կեանքից կորւած վերացական գաղափարներով խոստանում էր տալ մարդկութեանը լաւագոյն ապագա, բայց քսան դարերի ընթացքում ոչ միայն ոչինչ չտւեց, այլ ընդհակառակը՝ ինքը աջակցեց ունեար դասակարգերի իշխանութեան ամրապնդմանը և պատմութեան ընթացքում լաւագոյն գործիք դարձաւ նրա ձեռքում մարդը մարդու ձեռքով կեղեքելու և մարդկութեանը հոգեպէս ստրկացնելու յանուն տիրող դասակարգերի շահերին։ Աւելին, մինչև անգամ քրիստոնէութիւնն ինքը, յանձին

եկեղեցու, մոռանալով իր անդրերկրեա աշխարհները՝ փորձում էր հէնց այս աշխարհի երեսին հիմնել իր սկ պետութիւնը՝ չխորշելով նիւթական բոլոր «մեղսաւոր» վայելքներից։

Այլ կերպ չէր կարող լինել, որովհետեւ մարդկութեան ազատագրումը հնարաւոր է միայն ֆէօդալական, բուրժուական հասարակակարգի տնտեսական և սօցիալական հիմքերի յեղաշրջումով և միմիայն սօցիալիզմը հաստատելով։

Ան ինչպիսի մտապատկերներ ես ստանում «Գողգոթա» պօէմի ընթերցումից։

Պատմականօրէն պասախւ և անմոռնչ տանջանքի Գողգոթա սիմվոլը «Գողգոթա» պօէմի մէջ ստանում է նոր, յեղափոխական ակտիւ բովանդակութիւն, իր վսեմ և անողոք երթով։ Պրոլէտարիատը իր կազմակերպւած անհամար շարքերով, պատմական անհրաժեշտութեամբ, ընթանում է դէպի նոր պայքարի արիւնոտ գողգոթան, դէպի Մեծ յեղափոխութիւնը. և միլիոնաւոր բերաննե-

րից կազմակերպւած կոլեկտիվի ձայնն է
հնչում բարձր և խրոխտ.—

Դէպի վե՛ր, դէպի նոր Գողգոթան
Դուք քայլէք ու քայլէք այ ախպէրք!

Գուրգէն Հայկունու «Գողգոթա» պօէ-
մը իր ամբողջ կառուցւածքով մի ուժեղ
հարւած է՝ ուղղւած նոյնպէս նացիօնալիզ-
մի դէմ, որը եղել է ունեոր դասակարգի
շահերը պաշտպանելու մի ձև, քօղարկւած
հայրենիք ու ազգ անորոշ ու մութ բառե-
րով, աշխատաւոր մասսաներին խարելու,
նրա դասակարգային գիտակցութիւնը մթա-
գնելու համար, Բանաստեղծը լանցէտի վար-
պետ շարժումներով պատում է նացիօնա-
լիզմի դիմակը և երեան է հանում նրա իս-
կական էութիւնը: Նացիօնալիզմի ստեղծած
աղէտների ու մարդկային սպանդանոցների
սոսկալի տեսարանները, որոնցով լի են պատ-
մութեան էջերը, անասելի թափով ենում
են ընթերցողի հոգում իրենց ճիւաղային

կերպարանքներով: Մարմինդ վշաքաղւում
է, երբ կարդում ես հետեւեալ կտորը. որ-
պիսի թափ...և ի՞նչ պատկերներ...

Իշնում են սարից մշուշները—մէզ.
Դէմ առ դէմ քամին սուլում էր անգուր.
Ու սուլոցներով սողացին մէկ~մէկ
Գերեզմաններից սուերները լուռ:

Դարերի շարքով, դաւադիր մթին,
Երնում են այդպէս աեսիլքներն յաւէտ.
Քամու թեերով, թեթև, անմարմին,
Դալիս են նրանք մշուշ մէզի հետ:

Դալիս են մոայլ ու ամեն անգամ
Նզովք են թափում ձայներով անլուր...
Անլուր մահերթին, ամեն մի անգամ,
Հայրենի երկրով անցնում է սարսուռ...

Ու թշւառ երկրիս սուերները ու
Մթին խաւերում պահւում են նորից,
Որ մշուշ~մէզով, անմարմին, անձեւ,
Դէպի դուրս սողան գերեզմաններից:

Բայց պրօլէտարիատը շուտով սկսում
է հասկանալ թէ. ո՞վ է իր իսկական թշնա-
մին և անասելի թափով ուղղում է իր գէն-
քերը իրեն ճնշողների դէմ. Ուստի երես
դարձրած վերեզմանային նացիօնալիդմից,
դիմում է դէպի նպատակ.—

Ես կերթամ ճամբէքով վերամբարձ,
Ես կենեմ Գողգոթան կապուտան.
Դէպի յետ ինձ չկա վերադարձ,
Ես կերթամ դէպի նոր Գողգոթան:

Որքան գողարիկ է հետեւել երկտողը, որ
բանաստեղծն այնպիսի դառն հեգնութեամբ
ուղղում է պարտւած նացիօնալիստների
հասցէին.—

Արինի, դուլումի իմ վաթան,
Ուր կորան, ուր կորան քու ճամբէք:

Եւ յետո զզացմոնքով լի ու խրոխտ
թափով ձայնում է իր հարազատ դասին—
արթնացող պրօլէտարիատին.—

Իմ ամբուլ, իմ բլբուլ այ ախպէրք
Թուք քայլէք, դուք ելէք Գողգոթան:

«Գողգոթա» պօէմի ամբողջ ՎՊ-ըդ երգը
վերին աստիճանի կծու հեգնանք է նացիօ-
նալիզմի իդէօլօգիան արտայայտող գրական
հոսանքների ու պօէտների դէմ, որոնք կոր-
ցնելով իրենց հասարակական արժէքները՝
անխուսափելիօրէն ընկնում են սանտիմէն-
տալ և ուժանտիկ ձևերի յետեից:
Ան մի հրաշալի կտոր.—

Վերջին անգամ...մնաք բարով
Աւեր օջախ, իմ վաթան,
Կորած ճամբէք, մնաք բարով—
Ելնեմ ես իմ Գողգոթան:

Բանաստեղծը վարպետօրէն ու ցայ-
տուն բնորոշելով նրանց իրենց կորած ճամ-
բաներում, վերստին ընթանում է իր ան-
միջական ու յստակ ուղիով, ուր երևան է
բերում իր դասակարգի ամբողջ էութիւնն



ու կորովը, նորա անյաղթելի ուժը, նոր, ան-
նման աշխարհ կերտելու անսպառ տենչը.—

Իմ ճամբէն հեռաւոր ու անծայր—
Բայց թռիչքն իմ հոգու՝ անեղեր:

Մինչ աշխարհն այս դիշեր անպայծառ—
Իմ հոգին լուսաշող տիեզեր:

Ես ելա դէմ առ դէմ թշնամուն.—
Իմ ուժերն անհատնում, անսահման:

Ես կռւի կը կանչեմ ամենուն,
Որ կերտեմ իմ աշխարհն անհման:


Գուրգէն Հայկունու «Գողգոթա» պօէ-
մը տասնեակ տարիներ և նորից տասնեակ
տարիներ պիտի ապրի հայ պրօլետարական
գրականութեան մէջ, որպէս մի հրաշալի
նախերգանք դալիք համաշխարհային Մեծ
Յեղափոխութեան:

Բայց մեզ հետաքրքրում են նոյնուկս
բանաստեղծի միւս նոր կերտածքները,
որոնք թարմ հոսանք և նոր ուղիներ են
մտցնում հայ գրականութեան մէջ:
Այդ մասին մի որիշ անդամ:

Главлит № 5753

Тираж 480 экз.

Типография Моск. Армян. Литер.-Худож. Кружка
Армянский пер., д. 2 Телефон 2-78-28



«Ազգային գրադարան



NL0372934

65.040